բայց որովհետեւ երկաթուղիք կտրուած ու աւրուած են՝ չեն կրնար անցնիլ ի Փէքին։ Փէքինի ամէն կողմն աւերակ դարձած է։ Ճարոն եւս միացաւ Եւրոպացւոց հետ և զրկեց 22000 զինուոր։ Այս ալ յայտնի է՝ թէ մեզի եկած տեղեկութիւնք շատ անգամ իրարու հակառակ են, բայց ստոյգ է թէ Փէքինի գերմանական դեսպանն սպաննուած է չինացի զինուորներէն, և թէ Թուան իշխանն ու Նանկինի զօրավարն յափշտակեր են կայսերական իշխանութիւնը։

## ԱՅԼԵՒԱՅԼ ՏԷՐՈՒԹԻՒՆՔ

ԱՒՍՏՐԻՈՅ արքիդուքսն Փրանկիսկոս Ֆերտինանտոս ամուսնացաւ Քոմթէք կոմսուհւոյն հետ, երդուընելով կայսեր առջեւ որ ժառանգ ըլլալու իրաւունքը իրեն անձին միայն վերապահէ, և իւր կինը կայսրուհի ըլլալու իրաւունք պիտի չունենայ բնաւ, և ոչ ալ որդիքը ժառանգ կայսրութեան ըլլալու։ — Չէքերն մեծ չփոթութիւն հանեցին խօսարանին մէջ՝ մինչեւ որ Քէրպէր նախագահն կայսեր անուամբ խափանեց ժողովը։ — ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ նախագահին նոր ընտրութիւնն սկսաւ. ռամկավար կողմն կը պախարակէ Մաքքինլէյի քաղաքականութիւնը, վասն զի սա Անգղիոյ հետ շատ մտերմացաւ։ — ՌՈՒՍԻՈՅ Մուրավիէֆ պաշտօնէին անակնկալ մահը սուգ պատճառեց կայսերական վարչութեան. շատ կողմերէն հաւան ցաւակցութեան հեռագրեր առ Զայն։

## ՆԱՄԱԿԱՆԻ

ՎԱՌՆԱ. — Ե. ՍՐՄԱՔԷՇԽԱՆԼԵԱՆ. — Գնահատելով Ձեր յօդուածներու առողջ ուղղութիւնը՝ ողջունեցաւ խնդրոյ Սպանդարը. և մի և նոյն ատեն՝ քննադատելով Ձեր մի քանի գաղափարները, դուք Ձեր պատուական հանդիսին 6երորդ պրակին մէջ, ցոյց տուիք՝ թէ այն քննադատութեան միտքն չէք հասկցած. խնդրեմ Ձեր ազնուութիւնը բարեհաճի ուշ դնելու իմ քննադատութեանս հետեւեալ տողերուն, և մանաւանդ չակերտեալ բառերուն ուժը. «... անոնք — Եւրոպիոյ հայ թերթերուն է խօսքս — "արտասահմանի մէջ շատ առանձնաշնորհներ ունենալով", այժմ անոնց ծառայութիւնն այնքան չէ՝ որչափ որ կրնար պահանջուիլ». ուրեմն որոշ է միտքս որ արտասահմանի լրագիրներն՝ միջավայրի յառաջադիմական առանձնաշնորհները վայելելով հանդերձ, դեռ ռուսահայ և թրքահայ լրագրաց բազմակողմանի ծառայութիւնն չունին։ Դարձեալ մենք ըսած էինք. «Ազգագրական հանդէս, Բիւրակն, Թատրոն, Լումայ, Մուրճ, այս խոշոր հանդէսներու դիմաց, տակաւին փառքով և պատուով, զուգահաւասար հանդէս մը չծնաւ արտասահմանի «նոր» գաղութը»։ «Բազմավէպ» և «Հանդէս»ը հին գաղութի ծնունդ են։ Եւ միւս թերթերուն համար երբ կ'ըսեմ. «Միակ նպատակի մը կը ծառայեն» այդ ըսել չէ թէ չեմ գովեր այդ նպատակը. Au contraire! ինծի համար նուիրական է անոնց ծառայութիւնը. Ձեր քննադատութեան ամենէն աւելի վիրաւորիչն այդ ակնարկութիւնն կը գտնեմ. չէ Գ. Սրմաքէշխանլեան՝ կը խնդրուի չխեղաթիւրել իմաստներու առումը։ ԽՄԲ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵՐԵՄԵԱՆ Հ. Ս. — Ազնիւը . . . . . 337

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ԱԼԻՇԱՆ Հ. Ղ. Մ. — Արշալոյս Քրիստոնէութեան հայոց . . . . . . 340

ԵՐՄՈՆԻ Վ. — Քննադատական ուսումն. Ս. Գրոց հայկ. թարգ. վրայ: Թրգմն. ՍԱՐԵԱՆ Հ. Ս. . . . . . . . 346

ԷՖՐԻԿԵԱՆ Հ. Ս. — Արմաշ, Արփա . . 353

ՔԱՐՍՏ ՑՈՎՍ. — Պատմական քերականութիւն կիլիկեան հայերէնի. Թարգմ. Հ. Յ. ԱԻԳԵՐԵԱՆ . . . . . . . 356

### ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱԼԳՕՅԱՃԵԱՆ Ա. — Ուսումնասիրութիւն Սըրբունի Տիւսաբի . . . . . 359

ԹՈՐՈՍԵԱՆ Հ. ՅՈՎՀ. — Գրախօսական տեսութիւն. — Ազգագրական հանդէս . . 363

ԵՐԵՄԵԱՆ Հ. Ս. — Հանդէս Հանդիսից. — Նկատողութիւններ. — Ուսանողները. — Նոր թերթ մը. — Արեւելքի խմբագիրը. — Դասախօսութիւններ. — Ցփոթ մտքեր . . 370

Թ. — Գեղեցկագիտութիւն . . . . . 373

### ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՏԷ ԱՄԻՉԻՍ. — Իտալական մատենագրութեան էջեր. — Գիրք մը շարադրելու ժամանակ: Թարգմ. Ռ. ՊԱԶԱՐՃԵԱՆ . . 377

ՏԱՆԴԷ. — ԺԱ երգ. Վեցերորդ պարունակ. Հերետիկոսք, և այլն: Թարգմ. ՂԱՉԻԿԵԱՆ Հ. Ա. . . . . . . . 379

ՏԻՐԱՑՈՒԵԱՆ Հ. Ն. — Գիտութիւն և գիտ . 381

Ս. — Եւրոպական մամուլ . . . . 382

Ս. — Քաղաքական ամփս . . . . 383

Խ. — Նամականի . . . . . . 384


digitised by A.R.A.R.@